ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

« 19 » հոկտեմբերի 2022 թ. N 136-Ա/1

ԽՆԱՄԱՏԱՐ ԾՆՈՂ ԴԱՌՆԱԼ ՑԱՆԿԱՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԵՎ ԽՆԱՄԱՏԱՐ ԾՆՈՂՆԵՐԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ԿԱՄ ԱՌՈՂՋԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱ ԽՆԱՄՈՂ ԽՆԱՄԱՏԱՐ ԾՆՈՂ ԴԱՌՆԱԼ ՑԱՆԿԱՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի հունիսի 13-ի N 751-Ն որոշմամբ հաստատված N 2 հավելվածի 12-րդ և 15-րդ կետերով և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 700-Լ որոշմամբ հաստատված Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կանոնադրության 18-րդ կետի 20-րդ ենթակետի պահանջներով՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ

1. Հաստատել՝

1) խնամատար ծնող դառնալ ցանկացող անձանց և խնամատար ծնողների համար նախատեսված վերապատրաստման դասընթացի ժամանակացույցը՝ համաձայն N 1 հավելվածի,

2) հաշմանդամություն կամ առողջական խնդիրներ ունեցող երեխա խնամող խնամատար ծնող դառնալ ցանկացող անձանց վերապատրաստման դասընթացի ժամանակացույցը՝ համաձայն N 2 հավելվածի:

2. «Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ-ի տնօրենին՝ վերապատրաստման դասընթացները կազմակերպել և անցկացնել հեռավար եղանակով՝ առաջնորդվելով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2019 թվականի սեպտեմբերի 16-ի N 119-Ա/1 հրամանով:

3. Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնին՝ սույն հրամանն ուժի մեջ մտնելուց հետո մեկօրյա ժամկետում՝ դասընթացի մասին հայտարարությունը (առանց խնամատար ծնող դառնալ ցանկացող անձանց, խնամատար ծնողների և հաշմանդամություն կամ առողջական խնդիրներ ունեցող երեխա խնամող խնամատար ծնող դառնալ ցանկացող անձանց անձնական տվյալները հրապարակելու), ինչպես նաև 2019 թվականի սեպտեմբերի 16-ի N 119-Ա/1 հրամանով հաստատված խնամատար ծնող դառնալ ցանկացող անձանց, խնամատար ծնողների և հաշմանդամություն կամ առողջական խնդիրներ ունեցող երեխա խնամող խնամատար ծնող դառնալ ցանկացող անձանց համար նախատեսված վերապատրաստման դասընթացների թեմաները և ուսումնական նյութերը տեղադրել Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության պաշտոնական կայքերում:

4. Հավասար հնարավորությունների ապահովման վարչությանը՝ սույն հրամանն ուժի մեջ մտնելուց հետո մեկօրյա ժամկետում՝ խնամատար ծնող դառնալ ցանկացող անձանց, խնամատար ծնողների և հաշմանդամություն կամ առողջական խնդիրներ ունեցող երեխա խնամող խնամատար ծնող դառնալ ցանկացող անձանց ցուցակները, ինչպես նաև այդ անձանց անձնագրերի/նույնականացման քարտերի պատճենները տրամադրել «Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ-ին:

5. «Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ-ին՝

1) վերապատրաստման դասընթացն ավարտելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում Աշխատանքի և սոցիալական հարցերի

նախարարությանը ներկայացնել դասընթացներն ավարտած մասնակիցների ցանկերը՝ դրանում ներառելով մասնակցի անունը, ազգանունը և անձնագրային տվյալները:

2) մինչև սույն թվականի նոյեմբերի 14-ը՝ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ներկայացնել հաշվետվություն անցկացված դասընթացների վերաբերյալ՝ ներառելով մասնակիցների առաջարկությունները և գոհունակության գնահատման արդյունքները:

6. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել ոլորտը համակարգող նախարարի տեղակալին:

10/19/2022

X

ՆԱՐԵԿ ՄԿՐՏՉՅԱՆ

Signed by: MKRTCHYAN NAREK 3014890804

Ն. ՄԿՐՏՉՅԱՆ

Հավելված N 1

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի

2022 թվականի 19 հոկտեմբերի N 136/Ա/Հ հրամանի

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ԽՆԱՄԱՏԱՐ ԾՆՈՂ ԴԱՌՆԱԼ ՑԱՆԿԱՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԵՎ ԽՆԱՄԱՏԱՐ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ

Խմբի համարը	Խմբում ընդգրկված ունկնդիրների թիվը	Դասընթացում ընդգրկված ունկնդիրների մշտական բնակության վայրը	Դասընթացի անցկացման եղանակը	Դասընթացի անցկացման ժամկետը	Դասընթացի ծավալը
1	22	1. Տավուշի մարզ, 2 ունկնդիր 2. Կոտայքի մարզ, 1 ունկնդիր 3. Լոռու մարզ, 10 ունկնդիր 4. Երևան քաղաք, 6 ունկնդիր 5. Արմավիրի մարզ, 3 ունկնդիր	Հեռավար	24.10.2022-29.10.2022 14:30	24 ժամ

Հավելված N 2

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի

2022 թվականի 19 հոկտեմբերի N 36-Ա հրամանի

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ԿԱՄ ԱՌՈՂՋԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱ ԽՆԱՄՈՂ ԽՆԱՄԱՏԱՐ ԾՆՈՂ ԴԱՌՆԱԼ ՑԱՆԿԱՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ

Խմբի համարը	Խմբում ընդգրկված ունկնդիրների թիվը	Դասընթացում ընդգրկված ունկնդիրների մշտական բնակության վայրը	Դասընթացի անցկացման եղանակը	Դասընթացի անցկացման ժամկետը	Դասընթացի ծավալը
1	11	1. Կոտայքի մարզ, 4 ունկնդիր 2. Լոռու մարզ, 1 ունկնդիր 3. Երևան քաղաք, 3 ունկնդիր 4. Արագածոտնի մարզ, 1 ունկնդիր 5. Արարատի մարզ, 1 ունկնդիր 6. Սյունիքի մարզ, 1 ունկնդիր	Հեռավար	31.10.2022-05.11.2022 14:30	24 ժամ